ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2011 թվականի N 544 -Ա

ք.Հրազդան

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի մայիսի 18-ի N 42-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված 2011 թվականի օգոստոսի 30-ի N 25 պլանային ստուգման արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Առաջարկել Արզական համայնքի ղեկավարին.

1)քննարկման առարկա դարձնել պլանային ստուգման արդյունքները և վերացնել քաղաքաշինության բնագավառում արձանագրված խախտումները:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ